ՆԱՄԱԿ ԵԿԱՏԵՐԻՆՈՎԱՐԻՑ

—

25 փետրվարի

Կարդալով պատուական «Մշակ» լրագրի 19-որդ համարը յաղագս սովատանջ վ.ան քաղաքի հայոց, չարժեցաւ գութ ի սիրտ ժողովրդոց մերոց մատուցանել նուիրատուութիւն յօգուտ նոյն սովատանջ ազգայս հայոց որ ի վ.ան, որ և յորմնեցաք ստորագրութիւն յաղագս նուիրատուութեան՝ որ ելն ընդամենն երկք հարիւր յիսուն ռուբլի։

Վասնորոյ մատուցանելով ձերդ խմբագրութեան վիճակ երկք հարիւր յիսուն ռուբլի արծաթն, խնդրեմ հասուցանել ուր հարկն է և տալ տեղի ի մէջի ձեր պատուական լրագրոյն սակս արձանագրելոյ անուանք նուիրատուողաց։

Ու աւելորդ համարիմ յայտնել և անուանք աչխատողաց ողբ սիրով յանձն առին առնել զժողովարարութիւն, ողբ են այսոքիկ՝ Մինաս Շորշորեանց, Յովհաննէս Թամանեանց, Պետրոս Կարասուլեանց, Մկրտիչ Պաղտասարեանց, Մարտիրոս Պոպով, ընդ նոսին և ես նուաստ Մինաս աւագ քահանայս։

Տիկին Մարգարիտ Արգարեան Սալմիքեանց 50 ռ., Մինաս Շորշորեանց 25 ռ., Մանուկ Սերեպրակեանց 25 ռ., Պետրոս Կարասուլեանց 15 ռ., Մարտիրոս Պաղտասարեանց 15 ռ., Եղբայրք Պաղտասարեանց 10 ռ., Յովհաննէս Թամանեանց 10 ռ., Կարապետ և Աստուածատուր Արզումանեանց 10 ռ., Ստեփաննոս Կուզնէցեանց 6 ռ., Ստեփաննոս Զէպանեանց 6 ռ., Մարտիրոս Պոպով 5 ռ., Յովհաննէս Սաղիմեանց 5 ռ., Ղուկաս Իրկանեանց 5 ռ., Յովսէփ Աւշարեանց 5 ռ., Նիկողայոս Մըսրեանց 5 ռ., Պետրոս Հալլաճեանց 5 ռ., Նիկողայոս Ոթմանցեանց 5 ռ., Ալէքսան Գիւնէչեանց 5 ռ., Գէորգ Միեսէրեանց 5 ռ., Մկրտիչ Ամամեանց 5 ռ., Սարգիս Խարագիւլեանց 5 ռ., Դաւիթ Խասբեգեանց 5 ռ., Մինաս աւագ քահանայ Բարիեանց 5 ռ., Գէորգ քահանայ Մելիքեանց 5 ռ., Լուսարան Խլէպնիկեանց 4 ռ., Մինաս Քափիկեանց 3 ռ., Յարութիւն և Գասպար Ոսկերչեանց 3 ռ., Բժիշկ Իվան Կայսերին (հրեայ) 3 ռ., Աւետիս Իլանդիլեանց 3 ռ., Ստեփաննոս Խաչկուրուզեան 3 ռ., Աւետիք Խաղեզեանց 3 ռ., Փիլիպ Վոլքով (ռուս) 3 ռ., Գէորգ Թուրքովեանց 3 ռ., Կարապետ Թամազեանց 3 ռ., Սարգիս Զախալեանց 3 ռ., Սերովբէ Գուրէլեանց 3 ռ., Կարապետ Քէջէճիեանց 3 ռ., Ստեփաննոս Խասբէգեանց 3 ռ., Գէորգի Տէր-Յարութիւնեանց 3 ռ., Մերկեան Հալլաճեանց 3 ռ., Ջանկալ Լեոն Օհանջանեանց 3 ռ., Խաչատուր Խլէպնիկեանց 2 ռ., Վարդան Աֆդանդիլեանց 2 ռ., Ալէքսան Զէրնով 2 ռ., Գէորգ Խրշիեանց 2 ռ., Եսայի Զէրքաղեանց 2 ռ., Դաբրիէլ Զեկերդգեանց 2 ռ., Գէորգ Խրճեանց 2 ռ., Դալիր Պետրոս Զափխնեանց 2 ռ., Ղևոնդ Սաղիմեանց 1 ռ., Լուսերէն Շափզնիքեանց 1 ռ., Սարգիս Բաբիեանց 1 ռ., Գրիգոր Խլէպնիկեանց 1 ռ., Գրիգոր Անտոնեանց 1 ռ., Կարապետ Կուշնարեանց 1 ռ., Մըկրտիչ Քափիկեանց 1 ռ., Դաւիթ Միհնանճեանց 1 ռ., Աւետիք Շորշորեանց 1 ռ., Կարապետ Տէր-Գրիգորեանց 1 ռ., Ալէքսան Ուսով 1 ռ., Յովսէփ Մելիքեանց 1 ռ., Կարապետ Պախչիսարայցեանց 1 ռ., Մկրտիչ Կուշնարեանց 1 ռ., Ստեփաննոս Զերնովեանց 1 ռ., Կարապետ Խապախպաչեանց 1 ռ., Կարապետ Պարոնեանց 1 ռ., Ղազարոս Վայգեթիմեանց 1 ռ., Յակոբ Խաղոզլու 1 ռ., Աւետիք Պէշդաւեանց 1 ռ., Յովհաննէս Պէշդաւեանց 1 ռ., Դաւրիէլ Շորշորեանց 1 ռ., Սարգիս Գրուզլինեանց 1 ռ., Յարութիւն Պաչարսուքեանց 1 ռ., Մարգար Պարոնեանց 1 ռ., Պաղդասար Դիզիրեանց 1 ռ., Յովհաննէս Քրիստոսատուրեանց 1 ռ., Մովսէս Տուրիայեանց 1 ռ., Անդրէյ Զաղուրով 1 ռ., Գէորգ Խաչատուրով 1 ռ., Մելքոն Սարբյեանց 1 ռ., Քերովբէ Զուպարեանց 1 ռ., Կարապետ Խլէպնիկեան 1 ռ., Կիւրեղ Այվազեանց 1 ռ., Ալէքսանդր Դանդուրեանց 1 ռ., Հաճիպարոն Պոստանճեանց 1 ռ., Դէօրգի Բոսինեանց 1 ռ., Պողոս Այվազեանց 1 ռ., Կարապետ Զալպաչեանց 1 ռ., Յովհաննէս Ֆարմազոնեանց 1 ռ.։ Գումարն է 350 ռ.։

Մինաս աւագ քահանայ Բարիեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք Թիֆլիսարնակ պ. Եագոր Առաբելեան Եղիազարեանից 30 ռուբլ նրա տարեկան տուրքը յօգուտ «Արարատեան» ընկերութեան։

—

Ստացանք Թիֆլիսարնակ պ. Գրիգոր Սարգիսեան Կարագոզեանից 10 ռուբլ յօգուտ վ.անի սովատանջների։

—

ՄՈՍԿՎԱՅԻ «Русскій Курьеръ» լրագիրը համակրելով Հայաստանի սովատանջների համար հաւաքվող նուիրատուութեան մտքին, խորհուրդ է տալիս որ և ռուս հասարակութիւնը սկսէր հաւաքել նուիրատուութիւններ յօգուտ վ.անի սովատանջների։

—

Շնորհակալութեամբ ստացանք Գ. Հ. Ադամեանցի (մեր հայ դերասանի) բանաստեղծութիւնների ժողովածուն «Փերիթուածք և թարգմանութիւնք» վերնագրով։ Գիրքը հրատարակել է պ. Ս. Արծրունի։—Թիֆլիս, 1880 թ. Հ. Էնֆիանճեանի տպարան։ Տպագրութիւնը գեղեցիկ է և թուղթը մաքուր է։ Բանաստեղծութիւնների մէջ մի քանիսները վատ չեն, թէև բոլորն էլ, իրանց բովանդակութեան կողմից, միակերպ են. ամեն տեղ միմիայն սէրն է երգվում։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Պերճ Պռոշեանցի «Հայցի խնդիր» վէպը, որ առաջ տպված էր «Փորձ» ամսագրի մէջ, իսկ այժմ հրատարակվեցաւ առանձին գրքով, Յովհաննէս Բաբայեանցի ծախսով։

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք որ այդ լրագրի աշխատակիցներից մէնը դիտաւորութիւն ունի հրատարակել առանձին գրքոյկով կոմս Լորիս-Մելիքովի կենսագրութիւնը և դրա համար խնդրում է կոմսի կեանքի հետ ծանօթ անձինքներից տեղեկութիւններ հաղորդել «Кавказъ» լրագրի խմբագրութեանը։ Մենք, մեր կողմից, համակրելով պարոնի դիտաւորութեանը, խորհուրդ ենք տալիս նրան հրատարակել այդ բրոշիւրը թէ ռուսերէն և թէ հայերէն լեզուով։ «Մշակի» խմբագրութիւնը ուրախութեամբ յանձն կառնի թարգմանել հայերէն լեզուով և իր հաշվով հրատարակել կոմսի կենսագրութիւնը։ Գրքոյկին կցած կը լինի Լորիս-Մելիքովի պատկերը։ Մենք դիտաւորութիւն ունենք, եթէ գործը կաջողվի, առաջարկել ծախել այդ կենսագրութիւնը յօգուտ թիւրքաց Հայաստանի սովատանջների։

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են փետրվար ամսի վերջին օրերից, որ ալիւրի պուդը, որ առաջ 50 կոպէկով էր ծախվում, այժմ արժէ 2 ռ. 50 կ., միսը, որի ֆունտը առաջ 3 կոպէկ արժէր, այժմ ծախվում է 20 կոպէկով, իւղը, որ 15 կոպէկից բարձր չէր, այժմ 50 և մինչև 60 կոպէկ է ծախվում։

—

ԳԱՆՁԱԿԻ Ս. Լուսաւորիչ եկեղեցու միաբան Յովհաննէս քահանայ Տէր-Զաքարեանց ուղարկեց մեզ 50 ռուբլ յօգուտ վ.անի սովատանջների, որ տէր-հայրը հաւաքել է մասամբ գանձանակ մանածելով եկեղեցու մէջ, մասամբ էլ ստորագրութեան թերթի միջոցով։ Ահա նուիրատուների անունները. Յովհաննէս քահանայ Տէր-Զաքարեանց 1 ռ., վեց անյայտ անձինք 6 ռ. 50 կ., Ամիրբէջանեան 1 ռ., Ա. Մնացականեան 1 ռ., Բ. Խաչիկեան Շահրորեան 1 ռ., Ց. Մկրտչեանց 1 ռ., Բօսմիսոբը Մ. Եսայիբէկեանց 3 ռ., Ց. Գրիգորեան 2 ռ., Ս. Տէր-Յարութիւնեանց 3 ռ., Խ. Եսայեանց 1 ռ., Ց. Ստեփանեանց 1 ռ., Ա. Կարապետեան 50 կ., Մկ. Սարգսեան 50 կ., Ա. Աղաջանեան 1 ռ., Ա. Վանիեանց 3 ռ., Հեղինէ Բալուզեանց 1 ռ., Զաւակիր Մանուէլեանց 50 կ.։ Ընդամենը 50 ռուբլ։

—

«Մշակի» ընթերցողները յիշում են որ մի քանի ամիս սրանից առաջ, արտատպելով ֆրանսիական լրագիրներից, մենք հաղորդեցինք մեր խառն լուրերի բակնում մի լուր որ մի հայ-թիւրքացի ուսանող փարիզում կոտրելով փարիզի Պալէ-Ռուայալի մագազիններից մէնի ապակին, գողացել էր 40,000 ֆրանկի գոհարեղէններ։ Այժմ կարդում ենք «Սասի» լրագրի մէջ այդ լուրի հերքումը։ «Սասի»-ի մէջ ասված է, որ այդ հերքումն մեզ էլ ուղարկվեցաւ։ Բայց մենք չենք յիշում որ ստացած լինենք այս տեսակ յօդուած, եթէ ոչ, մեծ ուրախութեամբ կը տպագրէինք նրան «Մշակի»-ի էջերի մէջ։ Այժմ յայտնվում է որ ապակի կոտրող և ակնեղէններ գողացող ուսանողը հայ չէ եղել, այլ մի բոլգարացի, Վասիլ Քալիչէր անունով։ Ցանցաւորը ընկերներ էլ ունի, որոնք բոլորն էլ բոլգարներ են, և նրանցից մէնի անունը, որ նոյնպէս կալանաւորված է, Զաքարիա Ֆեյսովիչ է։ Այդ երիտասարդները ուղարկված են փարիզ իրանց ընտանիքների ձեռքով վաճառականութիւնը ուսանելու համար։

—

Ստացանք «Կանոնադրութիւն Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան» գրքոյկը (Уставъ Тифл. Общ. изданія Армянскихъ книгъ)։ Կանոնադրութիւնը տպված է հայերէն և ռուսերէն լեզուներով։—Թիֆլիս, Ց. Մարտիրոսեանի տպարանում, 1880 թ.։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

«Голосъ» լրագիրը ստացել է Բերլինից հետևեալ թղթակցութիւնը։

«Այստեղ չափազանց հետաքրքրութեամբ հետևում էին այն լուրերին, որ ստացվում էին Ս. Պետերբուրգից փետրվարի 19-ին Թագաւոր Կայսրի 25 ամեայ յոբելեանը տօնելու մասին։ Ամենքը զրոսվված էին, երբ միւս օրը հեռագիրը հաղորդեց, որ կոմս Լորիս-Մելիքովի վրա չարագործը ատրճանակ էր արձակել։ Գերմանական Կայսրի գրած շնորհաւորական նամակը ռուսաց Թագաւորին այստեղ մեծ տպաւորութիւն թողեց։ Ամենքը գտնում են, որ այդ նամակը ներկայ րոպէում մեծ նշանակութիւն ունի. իսկ իշխան Բիսմարկի ստորագրութիւնը նամակի տակ Վիլհելմ կայսրի ստորագրութենից յետոյ նրան տալիս է պետական այնպիսի գործողութեան նշանակութիւն, որ բոլորովին բացատրում է երկու պետութիւնների փոխադարձ յարաբերութիւնները։ Բացի այդ պաշտօնական նամակը, Վիլհելմ կայսրը գրեց ռուսաց Թագաւորին մի մասնաւոր նամակ, որով նա ի սրտէ շնորհաւորում է Ալէքսանդր Կայսրի 25 ամեայ Թագաւորութեան յոբելեանը։ Բացի այս նշանաւոր քաղաքական յայտնութիւնները Աբևելքի վերաբերութեամբ, նոյնպիսիներ եղան և Արևմուտքի վերաբերութեամբ։ Այս վերջիններին առիթ տուեց Բերլինի ֆրանսիական դեսպանի մարտի 1-ին տուած ճաշը, որին ներկայ էին գերմանական կայսրը, կայսրուհին և մի քանի նշանաւոր պետական մարդիկ։

Կայսրի խօսակցութիւնը ճաշի ժամանակ եղել է ֆրանսիական դեսպան կոմս Սէն-Վալլէի Բերլինում մնալու մասին։ Դեսպանի հետ թէ Վիլհելմ կայսրը և թէ կայսրուհին շատ ողորմած քաղաքավարի կերպով վարվել են ճաշի ժամանակ։ Կայսրը յայտնել է իր ուրախութիւնը Գերմանիայի և Ֆրանսիայի այժմեան անպայման բարեկամական յարաբերութիւնների առիթով, առանձին յարգանքով խօսել է Դրեվֆի և Ֆրանսիական մինիստր Ֆրէյսինէի մասին և յոյս է յայտնել, որ պետական այդ մարդիկը կը կարողանան արգելքներ դնել արմատականութեան զարգանալուն Ֆրանսիայում։ Բացի վերոյիշեալներից Վիլհելմ կայսրը քաղաքականութեան մասին ոչինչ չէ խօսել, բայց այդ խօսքերն էլ քաղաքական բաւական մեծ նշանակութիւն ունեն։

Երբ Գերմանիան յետ կանչեց իր Փարիզի դեսպան իշխան Հօհենլոէին, Ֆրանսիական լրագիրները երկիւղ յայտնեցին խաղաղութեան մասին։ Երբ պաշտօնական կերպով հերքեցին այն սխալ լուրերը, իբր թէ Գերմանիան իր դեսպանին յետ կանչելով, թշնամական դիտաւորութիւններ է ունեցել և երբ յայտնեցին, որ Հօհենլոէ հրաւիրված է Բերլին գերմանական արտաքին գործերի մինիստրութեան մէջ աշխատելու համար, գտնվեցան այնպիսի լրագիրներ, որոնք յայտնեցին, թէ գերմանական կառավարութիւնը, այդ գործի մէջ գաղտնիք պահելով, վիրաւորեց Ֆրանսիային։ Այս վերջին լուրը նոյնպէս սխալ է, որովհետև թէ մի քանի ամիս սրանից առաջ և թէ այժմ իշխան Բիսմարկ իր խօսակցութիւնների ժամանակ ֆրանսիական դեսպանի հետ, այդ մասին նրան տեղեկութիւն էր տուել, ուրեմն ֆրանսիական դեսպանը միջոց ունէր իր կառավարութեանը այդ մասին յայտնելու համար։ Մի խօսքով բոլոր պատահածները, որոնց մասին այդքան խօսեցին, ֆրանսիական կառավարութեանը անհանգիստ լինելու առիթ չէ տուել։

Նշանաւոր է այն, որ երբ իշխան Հօհենլոէ մարտի 2-ին վերադառնում էր Փարիզ Բերլինից, ֆրանսիական դեսպանը նրան ճանապարհ գցեց մինչև երկաթուղու կայարանը։ Դրանով կարծես կամենում էին ապացուցանել, որ երկու կողմերի յարաբերութիւնը լաւ է։ Ապրիլին իշխան Հօհենլոէ կը վերադառնայ Փարիզ և կը սկսի վարել Գերմանիայի արտաքին գործերի մինիստրի պաշտօնը։

Բերլինի պաշտօնական շրջաններում համակրութեամբ ընդունվեցաւ իշխան Հօհենլոէյի արտաքին գործերի մինիստր նշանակվելը, որովհետև նա յայտնի է իբրև ընդունակ և հաշտեցնող ուղղութեան պետական մարդ։ Բացի այդ Հօհենլոէ միջոց կունենայ աւելի ինքնայրունարար գործել, քան թէ նրա նախորդները, որոնք միշտ իշխան Բիսմարկի ազդեցութեան տակ էին լինում։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լոնդոնի «Polit Coesrrp.» լրագրին իբրև լուր հաղորդում են, որ պարլամենտի անդամների նոր ընտրութիւնները յունիսի վերջին կը սկսվեն, ինչպէս երևում է ընտրողների տրամադրութիւնից պահպանողականները դարձեալ յաղթող կը հանդիսանան և ձայների նշանաւոր մեծամասնութիւն կը ստանան։ Անգլիայում այժմ կան ընտրողական շատ շրջաններ, որտեղ առաջ ազատամիտներ էին ընտրվում, իսկ հիմա պահպանողականները կընտրվեն։ Ակներև երևում է, որ ազատամիտները կորցնում են իրանց յոյսերը։ Նրանց յարձակումները ներկայ կառավարութեան արտաքին քաղաքականութեան վրա ոչինչ հետևանքներ չունեցան։ Արտաքին գործերի մինիստր Մարկիզ Սալիսբիրիի երկարատև հիւանդութեան պատճառով ժամանակաւորապէս ընդհատվեցան բանակցութիւնները Ռուսաստանի հետ Հերատի գրաւման մասին։ Ցոյս կայ, որ այդ բանակցութիւնները յաջող հետևանքներ կունենան, մանաւանդ որ ազատամիտ կուսակցութեան նշանաւոր անդամներից մէկը, Հնդկաստանի նախկին փոխարքայ լորդ Նորսբրուկ յայտնեց լորդերի ժողովում, որ անգլիական ոչ մի կառավարութիւնը, լինի նա ազատամիտ, թէ պահպանողական, թոյլ չի տայ, որ Ռուսաստանը գրաւէ Հերատ։ Անգլիական արտաքին քաղաքականութիւնից դա գրեթէ միակ հարց է, որի մասին ազատամիտ և պահպանողական կուսակցութիւնները համաձայն են միմեանց հետ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի։ «Прав. Вѣстн. լրագիրը հաղորդում է որ ներքին գործերի մինիստրը վճռեց արգելել «Голосъ» լրագրին տպագրել մասնաւոր յայտարարութիւններ երկու ամսով։

ԼՈՆԴՈՆ, 7 մարտի։ Այստեղի լրագիրներում տպված է Գարտմանի խոստովանութիւնը որ նա է եղել գլխաւոր մեղաւորը Մոսկվայի երկաթուղու վրա Կայսրի դէմ կատարված եղեռնագործութեան փորձի։ Գարտման գաղթում է Ամերիկա։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ռ. կ., երկրորդ 92 ռ. 75 կ., երրորդ 93 ռ. 75 կ., չորրորդ 93 ռ. 87 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 224 ռ. 50 կ., երկրորդ 221 ռ., արևելեան առաջին 90 ռ. 25 կ., երկրորդ 90 ռ. 25 կ., երրորդ 90 ռ. 37 կ., ոսկի 7 ռ. 77 կ.։ Ռուսաց մի ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,28 պէնս, ռուսաց 100 ռուբլ Համբուրգի վրա արժէ 215 մարկ, 50 պֆ., Բերլինի վրա 127 մարկ, 50 պֆ., Փարիզի վրա 266 ֆրանկ, Բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրին տուած հրովարտակի մէջ բարձրագոյն շնորհակալութիւն է յայտնված ազնուականութեանը, զեմստվոյին և գիւղական հասարակութիւններին փետրվարի 19-ին նուիրատուութիւններ անելու և հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ յայտնելու համար։ «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ բոլգարական իշխանը Ս. Պետերբուրգից Ռուչչուկի վրա ուղևորվում է Տիրնովո։ «Новости» լրագիրը իբրև լուր հաղորդում է, որ ազգային լուսաւորութեան մինիստրը հրաժարական է տալիս։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ